ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔ

Լոռու մարզ, գ. Դարպաս, գյուղապետարան
07300634, հեռ. 0322 6-06-24

գրություն N 06

« 22 » 01 2014թ

Լոռու մարզպետ
պր-ն՝ Ա. Նալբանդյանին

Կից ներկայացնում եմ Դարպաս համայնքի ղեկավարի թիվ 104-Ա, 1-5 որոշումները և թիվ 1 հրամանը:

Առդիր՝ 7 էջ

Դարպաս համայնքի
ղեկավար՝ Ս. ԱՎԵՏՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, 3 փող. 5, 6-06-24

# Ո Ր Ո Շ Ու Մ

«28 .» դեկտեմբերի 2013 թվականի N 104-Ա

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Դարպաս համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 2014թ. մարտի 9-ի ընտրություններին մասնակցող թեկնածուների քարոզչական պաստառները փակցնելու համար Լոռու մարզի Դարպաս համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը`

1. գ.Դարպաս 3փող. 3տուն, - 6քմ.
2. գ.Դարպաս 1փող. 29 տուն, - 6քմ.
3. գ.Դարպաս 1 փող. 52 տուն - 8 քմ.
4. գ. Դարպաս 1 փող. 72 տնակ - 8 քմ.

Դարպաս համայնքի ղեկավար՝ Ս.Ավետյան

2013թ. դեկտեմբերի 28
Գ.Դարպաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, 3 փող. 5, հեռ. (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 10 » հունվարի 2014թ. N 01.

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածով և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 02.12.2013թ. 101/111.3/6158-13 գրությունը*

**որոշում եմ**

1. Դարպաս համայնքի 06-033-0027-0017 ծածկագրի 0.0117հա և 06-033-0027-0020 ծածկագրի 0.01288հա Անահիտ Աղվանյանի սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերի գործառնական նշանակությունը՝ խանութ տաղավար կառուցելու նպատակով, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոխադրել:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասերի նկատմամբ փոփոխության մասին տեղեկությունը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում, ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունը:
3. Որոշումը ենթակա է գրանցման ՀՀ ԿԱԱԳԿՊԿ աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Կ.Տ. Դ Ա Ր Պ Ա Ս համայնքի ղեկավար՝ Ս. Ա. ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, 3 փող. 5, հեռ.. (0322) 6-06-24

# ՈՐՈՇՈՒՄ

« 10 » հունվարի 2014թ. N 02

## ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 59-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, « Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387- Ն որոշումով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածով և հիմք ընդունելով 19.12.2013թ. թիվ 7512 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և Արման Ֆելիքսի Թովմասյանի դիմումը.*

որոշում եմ.

1. Վերականգնել Դարպաս համայնքի 06-033-0019-0037 ծածկագրի հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը 0.11 հա օրինական և ինքնակամ զբաղեցրած 0.00996 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող օրինական 1961թ. կառուցված 26.5 քմ., 76.77 քմ., 82.18 քմ., 1983թ. կառուցված 54.83քմ., 56.54քմ. բնակելի տան, 1990 կառուցված 2.25քմ, 1969թ. կառուցված 7.44քմ պարիսպի, 2.79քմ հենապատի, 3.05քմ կաքսայատան, 4.2քմ մառանի, 36.72քմ անասնագոմի, 8.32քմ պարիսպի, նկատմամբ Մարիամ Արտաշեսի Ղալաչյանի ծնվ. 1955թ. և Արման Ֆելիքսի Թովմասյանի ծնվ. 1981թ. սեփականության իրավունքը:
2. 06-033-0019-0037 ծածկագրով 0.11966 հա տնամերձ հողամասում ինքնակամ 1970թ. կառուցված 5.02 քմ. ջրամբարը, 1990թ. կառուցված 3.62 քմ. հավանոցը, 20.98 քմ. ցախանոցը, 0.26 քմ. պարիսպը գրանցել որպես ինքնակամ կառույց:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակածով:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ 3 փող. 4 նրբ. 9 բնակելի տուն:
5. Որոշումը ենթակա է գրանցման ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Կ.Տ. ԴԱՐՊԱՍ
համայնքի ղեկավար՝ Ս. Ա. ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, 3 փող. 5, (0322) հեռ. 6-06-24


# Ո Ր Ո Շ Ու Մ

«13» հունվարի. 2014թ. N 03.

## 06-033-0013-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՔՈԹԵՋԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԶԱՆՆԱ ՔԱԼՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով քաղաքացի Ռ. Քալոյանի դիմումը, տնակի առուծախի 10.09.1999թ. թիվ 1-4998 պայմանագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 59-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 3-րդ կետի «է» ենթակետի պահանջներով, «Ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387- Ն որոշումով*

**որոշում եմ.**

1. Ճանաչել Ռուզաննա Մարտիրոսի Քալոյանի ծնվ. 1960թ. սեփականության իրավունքը, իրեն պատկանող 1989թ. կառուցված 51.39 քմ. քոթեջի օրինական պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ առանձնացված 0.04401 հա հողամասի նկատմամբ:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. 1-ին կետում նշված գույքին տրամադրել 2 փող. 5 նրբ. 100 քոթեջ փոստային հասցեն:
5. Սույն որոշումը ենթակա է գրանցման ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Կ.Տ.

Դ Ա Ր Պ Ա Ս
համայնքի ղեկավար՝ Ս. Ա. ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, 3 փող. 5, (0322) հեռ. 6-06-24

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հունվարի. 2014թ. N 04.

## 06-033-0033-0031 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՔՈԹԵՋԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով քաղաքացի Սահակ Դանիելյանի դիմումը, «Վանաձոր քիմգործարան» Բ/Ը կողմից տրամադրված սեփականաշնորհման վկայագիրը, «ՌՈՒՆԻԿՈ ԳՐՈՒՊ« ՍՊԸ-ի կողմից 15.01.2014թ. կազմած հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետով , ՀՀ ՀՕ 59-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 3-րդ կետի «է» ենթակետի պահանջներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումով*

**որոշում եմ.**

1. Ճանաչել Սահակ Դանիելյանի ծնվ. 1928թ., Լենա Մարտիրոսյանի ծնվ. 1934թ., Արեն Դանիելյանի ծնվ. 1970թ. ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1989թ. կառուցված օրինական 63.92 քմ. քոթեջի, 17.02 քմ հարթակի օրինական պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ առանձնացված 0.03636 հա հողամասի նկատմամբ:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. 1-ին կետում նշված գույքին տրամադրել 2 փող. 3 նրբ. 32 քոթեջ փոստային հասցեն:
5. Սույն որոշումը ենթակա է գրանցման ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Դ Ա Ր Պ Ա Ս
Կ.Տ. համայնքի ղեկավար՝ Ս. Ա. ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, 3 փող. 5, հեռ. 0322 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20 .» հունվարի 2014 թվականի N 05

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 2014թ. մարտի 9-ին կայանալիք հերթական ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Դարպաս համայնքում տեղամասային կենտրոն սահմանել Դարպասի միջնակարգ դպրոցի շենքը /հասցե՝ 2-րդ փողոց, շենք 9/։

Դարպաս համայնքի ղեկավար՝ Ս ԱՎԵՏՅԱՆ

2014թ. հունվարի 20
գ.Դարպաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՐՊԱՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնք, հասցե գ. Դարպաս
հեռ. 0322 6-06-24

# Հ Ր Ա Մ Ա Ն

«16.» հունվարի 2014թվականի N 01

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ՝ Հ.ՋԵՅՐՈՅԱՆԻՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 173 հոդվածով և հիմք ընդունելով Հերմինե Ջեյրոյանի դիմումը.

Հ ր ա մ ա յ ու մ եմ.

Դարպաս համայնքի գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝ (3.2-1) Հերմինե Ալբերտի Ջեյրոյանին տրամադրել երեխայի խնամքի արձակուրդ մինչև երեխա-յի մեկ տարեկան դառնալը՝ 2014թվականի հունվարի 16-ից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԱՎԵՏՅԱՆ

2014թ. հունվարի «16»
գ.Դարպաս